

27. ԱԴՈՆ ՈՒ ԲԴՈՆ

Կէղնի մեկ կնիկ, մեկ մարթ: Կնգան անուն Բդո ա, իրկան անուն Ադո: Էտոնց մեկ հատ էլ աղչիկ կէղնի:

Էտ աղչիկ կը ճոչնա, խելք բան կը կտրա, կարքվելու դեվի կէնա:

Մեր կասա. - Ադո՛:

Կասա. - Ի՞նչ ա, Բդո՛:

Կասա. - Արի խելք թափենք:

Կասա. - Թափենք, թափենք:

Կասա. - Էրթանք մեր աղչըկեն բան բերինք կարքըվելու համար:

Կէրթան մեկ հոխա սև թուրթ կը բերեն, կուտան աղչըկեն:

Կասեն. - Տար, էսի լվա, թըխ սիվտըկի:

Աղոն ու Բըդոն խելք չունին, թեթև ին, աղչիկն խելացի էր: Ճար չըկար, օր ազատվեր էտանց մոտեն:

Աղչիկ բուրթ տարավ գետ, կարմնչի տակ, աղոթըրնին կէրթա, հիրի-կուն կուգա: Լվաց, լվաց բուրթ գինե սև մնաց: Կէղնի տաս օր, տարավ լվաց ու բերեց՝ սըվտըկելու ճար չէղավ:

Ամմա մեկ թյուջարի տղա ըմմեն էտ օր կարմընչով կէրթեր ու կուզեր: Էտ աղչկա չարչրում տեսավ: Էտոր խեղճ էկավ, ասաց. «Ես պիտի էս աղչիկ ազատեմ էս չարչարմունքից»:

Մեկ օր կանավ կարմունչի վրեն, աղչկա մոտեն խարցուց, ասաց. - Ի՞նչ ա կէնես դու, հըմեն օր բուրթ կը լվաս, էդոր մանեն ի՞նչ ա, զի ասա:

Աղչիկն ասաց. - Ես էլ չեմ գիտեր, թե ինչ ա կենեմ: Իմ մեր ծուռ, իմ խեր ծուռ, իլլայի, սև բուրթ տըված ա ընձի, կասեն. «տար լվա, թըխ սիվտըկի»: Ես էլա իմ հանխուն բերեմ լվամ:

Տղեն կասա. - Ախչի՛, արի՛ էլիր թարքս, ես քեզի տանիմ ազատեմ էտ ծըռերու մոտեն:

Տղեն էնի տարավ տուն:

Տառնանք Ադոյի ու Բըդոյի վրեն:

Իրիկուն էղավ, ախչիկ տուն չէկավ: Խարցուցին էստեղ, էնտեղ, խաբարն առան, թե մեկ թյուջարի տղա տարեր ա ուրին ապով, արեր ա ուրին կնիկ:

Բըղոն ասաց. - Ադո՛, աղա, արի խելք թափենք:

Ասաց. - Թափենք, թափենք:

Ասաց. - Փըշուր մեկ բան բերենք, էրթանք մեր ախչիկ տեսնենք:

Գացին մի քիչ խիզանի թեփ ժողվեցին, բերեցին, տաշտի մեջ շաղ-ղեցին, պաղ թորվան կող զանրկեցին, իրեք, չորս օր էտոր իշկեցին, չուր էփի:

Պլիթը թորվան մեջ չորցավ, ուրենց գիցածով՝ էփավ: Թորվան կողից խանեցին, լցեցին խուրջին, շալկեցին ու գացին: Խասան ախչըկե տուն: Ախչըկեն մուժղա տարան, թե քո խերն ու մերն էկան:

Ախչիկը վազավ հառեճ, շուտ բացեց խուրջին, քանի օր գիտա, օր խեր ու մեր ծուռ են, խոր ու մոր բերածներ թափեց գետ, ուրանց էմշը-ներուց լըցեց խուրջին ու ինք թորկեց գնաց:

Կիսուր խարցուց մոտեն, թե՝ ի՞նչ ա բերեր քո խերն ու քո մեր:

Ասաց. - Մեր էմշըներուց ա բերեր, ի՞նչ ա բերեր:

Հիրիկուն էղավ, խերն ու մեր տարավ օդեն, օր քնին:

Ճրաքն օր կպավ՝ իշկեցին, իշկեցին օր իլին չամիչ է էտտեղ:

Ասաց. - Ադո:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըդո:

Ասաց. - Ադա՛, արի խելք թափենք:

Ասաց. - Թափենք, թափենք:

Ասաց. - էս սև թըսթան բոլճըներ ի՞նչ ա լցած էստեղ: Քանի օր մեր ախչկե բալեն (պատիժ) են, մեր ախչիկ պիտի թափա:

Ասաց. - Ադո:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըդո:

Ասաց. - Արի էս սև բոլճըներ թափենք դուս:

Չուր աղոթրան բացվավ, հըմեն թափեցին դուս: Ավիլեցին, իստըկե-ցին նստան, բան չը մնաց:

Աղոթրնին ախչիկ շուտ էկավ, իշկեց օր օդի մեջ բան չըկա, դուս խանեց խերն ու մեր, օդի դուռ փանկեց:

էն օր մնացին: Նորեն իրիկուն էղավ: Ախչիկն էկավ, խերն ու մեր տարավ քնելու ապով: Մտան ներս, ուրանց նստան: Ճրաք կպավ: Իշկեցին օր ի՞նչ իշկեն՝ կէղնի քսան խատ պըղող, բացին բերներ, հըմեն քաղցր ռուբ ա: Ուրանք չեն գիտեր, թե ուտելու բան ա:

Ասաց. - Աղո՛:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըղո:

Ասաց. - Արի խելք թափինք:

Ասաց. - Թափենք, թափենք:

Ասաց. - Էս սև մըրկաթներ արի թափենք դուս:

Չուր աղոթրան բացվավ, հըմեն թափեցին տուս, հըստըկեցին, ավիլեցին, նստան:

Աղոթրան էղավ, ախչիկ շուտ էկավ, իշկեց օր բան չըկա: Քաղցրեր հըմեն լցած ա գետ:

Խերն ու մեր դուս խանեց, օդի դուռ փակեց, համմա շատ հերսոտավ ուրանց վըրեն:

Էն օր էլ գնաց, էղավ իրիկուն: Ախչիկն էկավ, խերն ու մեր տարավ տըռան ետև դագերու մոտ:

Կէղնի էտտեղ խարիր հատ ղազ: Ղազ ա՝ կըտընցով զուրանց քորեն-մորեն:

Էտանք իշկեցին, գիտցան թե օջիլ կա ուրանց վրեն, օր զուրանք կը քորեն:

Ասաց. - Ադո:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըդո:

Ասաց. - Արի խելք թափինք:

Ասաց. - Թափինք, թափինք:

Ասաց. - Ուզենք մեկ պղինձ, փշուր մե լա փետ, վանռենք, ջուր տաքցուցենք, մախսուս ասենք՝ մեր օտներ կը լվանք, թող մեր ախչիկ չըխասկնա. բերենք ղազերու գլոխ լվանք:

Ուզեցին պղինձ, փետ, ջուր, օճախ կպուցին, ջուր եռաց, ղազերու օտ ու գլոխ բռնեցին, գլխու վերեն զարկեցին պղնձի մեջ ու խանեցին՝ մեկ-մեկ թառի վերեն դրեցին: Խարիր ղազն էլ լվացին, ամմա խատուցին հըմեն էլ:

Ասաց. - Ադո՛:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըդո:

Ասաց. - Տեսա՞ր, ի՞նչ խելք էր թափեցինք, ղազեր հըմեն ռըհաթան ու քնան:

Աղոթրան էղավ, ախչիկ շուտ էկավ: Տեսավ օր մեկ ղազ սաղ չըկա:

Էլավ մեկ խատ օսկի տվեց խորն ու մոր, դուռ բացեց ու դուս էրեց:

Մնաց օր ախչիկ ուր փարով ուր խորն ու մոր տված զարարներ կ՚առնի, կը լցա:

Խերն ու մեր գացին: Շատ գացին, քիչ գացին, մեկ խովըվի ռաստ էկան:

Ադոն ասաց. - Խովիվ, արի էսա տեղ, քեզի բան կասեմ. առ էսա փարեն քեզի, մեզի իմալ օչխար մի բերես, օր պընչներուց մեղր գա:

Խովիվ տեսավ օսկին, ուրախութենե ծռավ: Գնաց ճըղի մեչ, որ մեկն օր աղեկ օչխար էր, իստկեց, բերեց: Ադոն ու Բըդոն չը խավնան:

Ասաց. - Խովի՛վ, խընձ էսի է՚լ աղեկ օչխար բեր:

Ասաց. - Խընձի էսի էլ աղեկ չունեմ, տու գընա քու ձեռքով իստըկա, բեր:

Գացին, իմալ օչխար մի բերեցին, որ խինգ կռոշ չարժեր: Քընթեն ու բերնեն խլինք կը թափեր: Հովիվ շատ ուրախացավ, որ խավնան էտ գեշ օչխրին:

Ադոն ու Բըդոն առան օչխար, գացին տուն, թունդիր վառեցին, էտ օչխար տրեցին խիրիսա:

Ասաց. - Ադո՛:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըդո:

Ասաց. - Արի խելք թափինք:

Ասաց. - Թափինք, թափինք:

Ասաց. - էրթանք պրակ, ատման խորթիչ բերենք, որ խիրիսեն ուտենք:

Ուրանց փարեն կապեցին շորի մեչ, տրեցին սան գլոխ, թունիրն էլ աղեկ ծածկեցին, օր խիրիսեն չը պաղի: Դուռ փանկեցին, պանլնիս տրեցին պատի գլոխ, գացին պրակ:

Գանցին ճամխու մեչտեղ, մեկ մարթ էտանց ռաստ էկավ:

Ադոն ասաց. - Մա՛րթ, քո խեր կանիծիմ, չէլնի՛ էրթաս մեր տուն՝ հանդե խիրիսեն թոնիրն է, փարեն էլ կապուկ ա շորի մեջ, դրուկ ա սան գլոխ, պալնիսն էլ պատի գլոխն ա: Ձքո խեր կանիծեմ, օր թե էրթաս առնիս:

Ադոն ու Բըդոն գացին:

Դառնանք էտ մարթու վըրեն: Մարթ ասաց. «Կարելի է՝ էսանք ծուռ են, ես պիտի էրթամ իշկիմ, կէղնի օր, օղորթ ա»:

Գնաց ծեռ տվեց պատի գլոխ՝ պալնիս տեղ, դուռ բացեց մտավ ներս, շուտ թունիր բացեց՝ խիրիսեն էլ պուտկի մեչ, կուշտ կերավ, զպտուկն էլ ապականեց: Սան գլոխն էլ իշկեց՝ փարեն էլ տեղն էր: Վերցեց փարեն, շորի մեչն էլ ապականեց, էլմեն սան գլոխ դրեց: Հէլավ դուռ փակեց, պալնիս պատի գլոխ տրեց, թորկեց գնաց:

Գանք Ադոյին ու Բըդոյին վրա:

Գացին պրակ, մեկ-մեկ ճեռչ ծառ քոքերով քաշեցին, թևերու վրեն դրեցին ու էկան: էկան դուռ, իշկացին օր պալնիս տեղն ա:

Ասաց. - Ադո՛:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըդո՛:

Ասաց. - Տեսա՞ր ի՛նչ խելք էր թափեցինք: էն գյանչ օր էն մարթուն խոր գանգ չը քֆրի ու թամբեխ չէնի՝ պիտի մտներ մեր տուն, խիրիսեն էլ ուտեր ու փարեն էլ տաներ:

Դուռ բացին, մտան ներս: Իշկեց օր թորվան պերանն պաց, ճանջերն էլ լցված են պուտկի մեչ: Վանզանվ փանրեն իշկաց: Իշկեց օր կակուղ ա: Շոր պանցեց օր ապականված ա:

Ասաց. - Սունը վեր հէլանի՞, իմանա՞լ պուպուզ անի, իմանա՞լ քաք անի:

Դարձավ պուտկի վրա:

Ասաց. - Ադո:

Ասաց. - Ի՞նչ ա, Բըդո:

Ասաց. - Արի խելք թափինք:

Ասաց. - Թափինք, թափինք:

Ասաց. - էս մեր խիրիսեն կա ու չկա, էս ճանջերն են կերած:

Ճանջ մի թռավ Բըդոյի ճակտին նստավ:

Ասաց. - Բըդո՛:

Ասաց. - Ի՞նչ ա, Ադո՛:

Ասաց. - Ճակատ պինդ բըռնա:

Կացին առեց ձեռք, մեկ ճակտին զարկեց:

Բըդոն մեռավ:

Ադոն էլավ թորկեց, տնեն գնաց: Գնաց ինադ էրեց, գետ կը լոխկնա: Գետին մեչը մամուռներ կուգան փաթվեն իր ամոթ:

- Ադա, - կըսե, - Բըդոն մեռեր ա, դուն կանաչ ու կարմիր կը փաթե՞ս:

Ջրից դուս կ'էլնի, չախուն ջոբեն կը բանա, կը թալա՝ ուր ամոթ կտրա: էն էլ էնտեխ կը մեռնի: